

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

_____ 2018 թվականի N ___-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ
24-Ի N 1075-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու և գույք տրամադրելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1075-Ն որոշման 1-ին կետում «30 քառ. մետր մակերեսով կաթսայատունը և 0.3745 հեկտար մակերեսով հողատարածքը» բառերը փոխարինել «25.2 քառ. մետր մակերեսով կաթսայատունը և 0.3741 հեկտար մակերեսով հողատարածքը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կրթության և գիտության նախարարի պաշտոնակատար Արայիկ Հարությունյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1075-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

Սույն որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության 2017թ. օգոստոսի 24-ի N 1075-Ն որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ սահմանված 5-րդ կետի կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 26-ի N 346 որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Սարգսյան 15 հասցեում գտնվող գույքը/ ուսումնական մասնաշենքը և կաթսայատունը/ հանձնման-ընդունման ակտով հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը /այսուհետ՝ վարչություն/, սակայն «Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ՝ Կազմակերպություն/ հետ անհատույց օգտագործման պայմանագիր չի կնքվել: Որոշման 1-ին կետի համաձայն ուսումնական մասնաշենքը և կաթսայատունը հետ են վերցվել կազմակերպությունից և թողնվել են վարչության տնօրինությանը՝ այն հետագայում անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին՝ «Շիրակի ակադեմիկոս Մ. Թումանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» մասնաճյուղին տրամադրելու համար:

Նշված Որոշման 6-րդ կետի հանձնարարականի կատարումն ապահովելու նպատակով Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի /այսուհետ՝ Կոմիտե/ կողմից իրականացվել է նոր չափագրումներ 17.04.2018թ. տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 17042018-08-0031 վկայականում նշված կաթսայատան և հողամասի մակերեսները չեն համապատասխանում Որոշման 1-ին կետում նշված կաթսայատան և հողամասի մակերեսներին, ինչն էլ խոչընդոտ է հանդիսանում «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հետ անժամկետ ու անհատույց օգտագործման պայմանագիր կնքելուն:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել Որոշման 1-ին կետում կատարել համապատասխան փոփոխություն:

Կարգավորման նպատակը և բնույթը

Նշված նախագծի ընդունմամբ հնարավորություն կստեղծվի «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հետ կնքել հիմնադրամի կողմից օգտագործվող անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1075-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1075-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	Ֆինանսների նախարարություն 2018-10-31 թիվ 01/9-5/19784-18	Առաջարկություն և դիտողություն չունի		
2.	Տնտեսական զրգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի 2018-10-25 01/22.2/6145-18	Առաջարկություն և դիտողություն չունի		
3.	Անշարժ գույքի կադաստրի Կոմիտե 2018թ.-10-29 ԱՄ/6221-18	Առաջարկություն և դիտողություն չունի		

4.	Արդարադատության նախարարություն 2018-11-13 N 02/627709-18	Նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1075-Ն որոշման մեջ կատարել միայն փոփոխություն, ուստի նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարելուն վերաբերող 3-րդ մասին արված հղումը:	Ընդունվել է	Որոշման նախագծի նախաբանից առաջարկին համապատասխան հանվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի՝ նորմատիվ իրավական ակտում լրացումներ կատարելուն վերաբերող 3-րդ մասին արված հղումը:
----	--	---	-------------	---